««Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների հետ)՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հաստատություն ՝ Ապարանի «Վարդանանց ասպետներ» մանկապարտեզ

Դաստիարակ ՝ Լորետա Ղազարյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……..……...…...3

1. Մանկավարժությունը որպես գիտություն և մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանությունը և ուսուցման եղանակները ……..4

1.1 Մանկավարժությունը որպես գիտություն……...…….4

1.2 Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանությունը և ուսուցման եղանակները……...…..…9

2. Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների հետ)՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման եվ ընտանեկան դաստիարակության հարցում……....……...13

Եզրակցություն……...…..…..19

Գրականության ցանկ ……..……20

Ներածություն

Մանկավարժությունը որպես գիտություն զբաղվում է սերունդների կրթության, դաստիարակության և զարգացման հիմնախնդիրներով:Կարելի է ասել՝ գիտություն է, որը հետազոտում է կրթության և զարգացման օրինաչափությունները: Մանկավարժության օբյեկտը կրթություն է, որի միջոցով սաները ձեռք են բերում գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ և դրանց հիման վրա ձևավորում իրենց աշխարհայացքը, բարոյական որակները, համոզմունքները և վարքը:

Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ օժանդակում է այս գործընթացին՝ այն դարձնելով էլ ավելի արդյունավետ: Համագործակցությունը ինքնին իրենից ենթադրում է նպատակ, որը ուսումնական գործընթացում պետք է ունենա միայն դրական միտում:

Թեմայի արդիականութկունը: Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը:Ընտանիքը՝ որպես գլխավոր առանցքային ուժ և հենք համարվում է հիմնական շարժիչ ուժը երեխայի կրթական գործընթացում:Ընտանիքը՝ որպես անձի ձևավորման առաջնային ինստիտուտ կարևորագույն գործառույթ ունի մեծացող սերնդի դաստիարակության, զարգացման և սոցիալակացման հարցում:

Թեմայի նպատակը: Թեմայի նպատակն է ուսումնասիրել ի՞նչ է մանկավարժությունը, մանկավարժական մեթոդները և մանկավարժական աշխատողի համագործակցությունը՝ սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ նրանց ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպելիս:

Թեմայի խնդիրները:Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

- Ներկայացնել՝ մանկավարժության պատմական զարգացումը և ժամանակակից մանկավարժության մեջ կիրառվող մեթոդները:
- Բնութագրել՝ ուսուցման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդների առավելությունները ուսումնական գործընթացում
- Վեր հանել՝ մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության կարևորությունը կրթական գործընթացում և դաստիարակության հարցում:

Աշխատանքը բաղկացած է՝ ներածությունից, երկու գլուխներից (որոնք իրենց մեջ ընդգրկում հիմնական ենթավերնագրեր), օգտագործված գրականության ցանկից:

1 ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

1.1Մանկավարժությունը որպես գիտություն

Մանկավարժությունը հումանիստական գիտություն է: Աշխարհի շատ լեզուներով այն կոչվում է «Պեդագոգիկա»: Վաղ ժամանակներից այն համարվել է փիլիսոփայության մի ճյուղը, իսկ 17-րդ դարից այն անջատվեց նրանից, սակայն փոխկապվածությունը պահպանվեց և կպահպանվի այնքան ժամանակ, որքան ժամանակ կպահպանվեն այդ գիտությունները: Ժամանակակից մանկավարժությունը մարդու մասին գիտությունների համակարգի մի մասն է կազմում, որն ուսումնասիրում է մարդու զարգացումը, նրա գործունեության, հարաբերությունների, սոցիալական կապերի համակարգը, ներաշխարհը: Պատմականորեն մանկավարժությունը ծագել և զարգացել է որպես գիտություն դաստիարակության մասին: 20-րդ դարում մանկավարժության սահմաններն ընդլայնվել են, փոփոխվել է նաև մանկավարժության ուսումնասիրության առարկան:Շարունակական կրթության գաղափարով պայմանավորված՝ այսօր մանկավարժության ուսումնասիրության առարկան կրթությունն է: Մարդը զարգանում և փոփոխվում է ողջ կյանքի ընթացքում, այսինքն նա շարունակական մանկավարժական օգնության կարիք է զգում ողջ կյանքի ընթացքում: Մանկավարժությունը և՛ տեսական, և՛ գործնական գիտություն է: Մանկավարժությունը չի առաջարկում դեղատոմսեր, միանշանակ պատասխաններ:Սակայն առաջարկում է դրույթներ և ստեղծագործական որոնողական աշխատանքի սխեմաներ, որոնք թույլ են տալիս իրականացնել երեխայի դաստիարակությունը, ձևավորելով նրա անձնային որակները: : Կարելի է սահմանել նաև այսպես. մանկավարժությունը գիտություն է, որը հետազոտում է կրթության, դաստիարակության և զարգացման օրինաչափությունների: Մանկավարժության կողմից կիրառվող գիտական հասկացությունները բազմազան են: Մանկավարժությունը, գրում է Յու.Կ. Բաբանսկին, գործառնում է մի շարք ուրիշ հասկացություններ (օրինակ՝ գիտելիք, կարողություն, հմտություն, հնար, միջոց, մեթոդ), որոնք ունեն ինչպես ընդհանուր գիտական նշանակություն, այնպես էլ՝ նեղ մանկավարժական [Բաբանսկի;1986, էջ 7]: Բոլոր գիտությունների նման

մանկավարժությունը նույնպես կապված է մի շարք գիտությունների հետ։ Առանց այդ կապերի ընդհանրապես գիտությունները չեն կարող զարգանալ։ Այսօր բազմազան ու բազմաբնույթ խնդիրներ լուծելիս գիտությունները միավորվում են։ Ուրեմն, առանց միջառարկայական, միջգիտական կապերի ոչ մի գիտություն ինքնին չի կարող զարգանալ։ Մանկավարժությունը կապեր ունի հատկապես այն գիտությունների հետ, որոնք ուսումնասիրում են մարդուն, նաև առնչվում է այն գիտություններին, որոնք համատեղ կամ առանձին-առանձին հետազոտում են միևնույն խնդիրները։

Մանկավարժության հիմնական հասկացություններն են՝

- <u>անձի ձևավորումը</u>՝ ինչպես նպատակաուղղված գործողությունների, այնպես էլ շրջապատի՝ հաճախ հակասական ազդեցության ներքո,
- <u>դաստիարակությունը</u>՝ ընտանիքի, տարբեր կազմակերպությունների համատեղ ջանքերով աշխարհայացքի ձևավորումը, աշխատանքային, մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակությունը,
- <u>կրթությունը</u>՝ գիտելիքների յուրացման ընթացքն ու արդյունքները, հմտությունների ու կարողությունների մշակումը,
- <u>ուսուցումը</u>՝ մարդուն կրթելու անընդմեջ գործընթացը՝ գիտելիքների հաղորդումը և յուրացումը։

Հիմա անրադառնանք մանկավարժության հիմնական հասկացություններին (որոնք կներկայցնենք առանձին-առանձին)՝

1) **Դաստիարակություն**

Դաստիարակություն բառը ծագում է հին պարսկերենից։ Հին Պարսկաստանում դաստիարակ էին անվանում այն փոխարքային, որը ղեկավարում էր աճող սերնդի հոգևոր զարգացումը [Ղույումչյան;2005թ. էջ 14]։ Դաստիարակությունը կարելի է ըմբռնել տարբեր իմաստներով, նախ՝ որպես օբյեկտիվ հասարակական երևույթ՝ կյանքի դաստիարակություն (մարդը, ծնվելով հասարակության մեջ, յուրացնում է մարդկային խոսքը, կենցաղի, աշխատանքի և մշակույթի առավել մատչելի տարրերը)։ Դաստիարակությունը, որպես այդպիսին, սկզբնավորվել է մարդու ծագման հետ միասին, որպես աշխատանքային գործունեության արդյունք։ Կյանքի հետագա զարգացումն ու հարստացումը հասարակությանը կանգնեցրին իր անդամների զարգացումն ու ձևավորումը պլանավորելու, հատուկ կազմակերպելու անհրաժեշտության առաջ։ Դեռևս նախնադարյան հասարակության մեջ ցեղը, տոհմը,

մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էին իրենց առավել խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց, որոնք արդեն հատուկ կերպով, հատուկ պայմաններում, քիչ թե շատ հետևողականորեն կազմակերպում էին տվյալ հանրության երեխաների, աճող սերնդի ձևավորումն ու զարգացումը։

Ծագեց դաստիարակության մի նոր տեսակ՝ որպես հատուկ կազմակերպված, հատուկ մարդու կողմից մեկ այլ մարդու դաստիարակելու գործընթաց։ Դաստիարակությունը դարձավ մասնագիտական գործունեության բնագավառ։ Աստիճանաբար կատարելագործվեցին մանկավարժական գործընթացի մասին գիտելիքներն ու փորձը։ Դաստիարակության՝ որպես մանկավարժական գործընթացի ամենաէական առանձնահատկությունը երկկողմանիությունն է, քանի որ նրան մասնակցում են երկու սուբյեկտներ՝ դաստիարակը և սանը, որոնք կարող են համագործակցել, պլանավորել դաստիարակելու ենթակա հատկանիշները և դրանք սանին փոխանցելու, նրան հաղորդելու ուղիները, եղանակները, պայմանները, կազմակերպական ձևերն ու մեթոդները։ Լայն իմաստով դաստիարակությունը՝ որպես բնական, տարերային, օբյեկտիվ հասարակական գործընթաց, ուսումնասիրվում է էթիկայի, էսթետիկայի, փիլիսոփայության, իրավագիտության և այլ հասարակական գիտությունների կողմից։ Դաստիարակությունը ենթադրում է անձի կատարելագործման գործընթացն ու նրա արդյունքը, այն ներառում է անձի զարգացման բոլոր կողմերը, զարգացումն ու ձևավորումն ապահովող բոլոր գործոնները, այդ թվում՝ ուսուցումը և կրթությունը[Подласый И.П.;2002, с.9]։

Սակայն մանկավարժական գիտության մեջ դաստիարակությունը հասկացվում է նաև նեղ իմաստով՝ որպես անձի վարքագիծ՝ բնավորություն, հարաբերությունների մշակույթ, աշխատանքային մշակույթի յուրացում և այլն, այսինքն՝ որպես բարոյական, աշխատանքային, ֆիզիկական և գեղագիտական դաստիարակություն։ Հետևաբար, դաստիարակությունը՝ նեղ իմաստով, անձի զարգացման և ձևավորման կազմակերպումն է, որը չի ներառում նրա ուսուցումն ու կրթությունը։ Այսպիսով, դաստիարակությունը ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական-պատմական փորձի փոխանցման գործընթացն է՝ նրանց կյանքի և աշխատանքի նախապատրաստելու նպատակով, որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար[Ղույումչյան;2005 թ. էջ 16]

2) **Կրթություն**

Կրթությունը սովորողի մտավոր զարգացածության, հմտությունների և ճանաչողական ընդունակությունների յուրացման մակարդակն է։ Միաժամանակ կրթությունը ենթադրում է նաև լավ դաստիարակություն, վարքի կատարելություն և այլն, քանի որ կրթված մարդ ասելով հաճախ հասկանում ենք ոչ միայն այն, թե մարդն ինչ գիտի, այլև այն, թե ինչպես է իրեն դրսևորում միջավայրում[Сластенин В.А.; 2002 с. 11]։Թեև կրթությունը հիմնականում մտավոր զարգացման բնութագիր է, այն ակնարկում է նաև մարդու դաստիարակությունը։ Նշանակում է՝ կրթությունը ուսուցման և դաստիարակության արդյունք է, մարդու կայուն, կարելի է ասել՝ անդարձելի բնութագիր է, որակ, մակարդակ է։ Ձեռք բերել որոշակի կրթություն, նշանակում է բարձրանալ զարգացման մի նոր աստիճանի, պիտանի դառնալ ավելի բարդ գործունեության։Եթե տասնամյակներ և դարեր առաջ ընդամենը գրել-կարդալ իմացող մարդը կարող էր համարվել կրթված մարդ, ապա այսօր կրթվածությունը ենթադրում է գիտելիքների հիմունքների հիմնավոր տիրապետում, գիտական աշխարհայացքի ձևավորում, սովորելու առաջավոր ձևերի տիրապետում, ինքնուրույնաբար գիտելիքների ձեռքբերման կարողություններ և այլն[Смирнов В.И.;1999 с. 21]։

3) **Ինքնակրթություն**

Ինքնակրթությունը ենթադրում է մարդու նպատակաուղղված ու նպատակասլաց աշխատանքը, որը կապված է իրեն որոշակի հետաքրքրող բնագավառում գիտելիքների որոնման և յուրացման հետ[Ամիրջանյան;2005 թ. էջ 18]։

Ինքնադաստիարակությունը մարդու՝ իր մեջ ցանկալի գծեր, որակներ ու վարքի ձևեր ձևավորելու գիտակցված և նպատակասլաց աշխատանքն է։ Վերադաստիարակությունը մանկավարժության խրթին հիմնահարցերից է։ Մարդը տարիներ շարունակ դաստիարակվում է, բայց դրական արդյունք չի ապահովում։ Այս դեպքում է, որ մանկավարժությունը դաստիարակից պահանջում է թափանցել դաստիարակվողի ներաշխարհը, իմանալ նրա էության բոլոր կողմերը, որոնել նոր մեթոդներ, հնարներ և միջոցներ՝ տվյալ մարդուն դաստիարակելու համար[1]։

4) **Ուսուցում**

Ուսուցումը նույնպես մանկավարժական գործընթաց է։ Այն մանկավարժի և սովորողների փոխազդեցության նպատակաուղղված գործընթացն է, որի ընթացքում իրականացվում են մարդու կրթությունը, դաստիարակությունը և զարգացումը[Յու.Ա.

Ամիրջանյան; 2005 թ էջ 18]։ Այն աշակերտի իմացության ոլորտի զարգացման, նրա ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման և գիտելիքներ հաղորդելու գործընթաց է, որը կատարվում է մանկավարժի՝ դաստիարակի կամ մանկավարժի կողմից։ Ուսուցումը՝ որպես մանկավարժական գործընթաց, նույնպես ունի երկու կողմ։ Վերջին տարիների տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի բուռն զարգացումը և ներդրումը Հայաստանում լուրջ ազդեցություն են թողնում անձի ձևավորման ու զարգացման վրա։ Անձի ձևավորումն ու զարգացումը արդեն իսկ հնարավոր չէ առանց տեղեկատվական տեխնոլոգիաների։ ։ Զգալիորեն փոխվում են նաև նրա սիրելի զբաղմունքը՝ խաղերը, փոխվում են նաև նրա սիրելի հերոսներն ու, թերևս, սկզբունքները։ Համակարգիչն այսօր տեղեկության ստացման և մշակման հզոր գործիք է։ Այդ պատճառով լիովին բնական է այդ միջոցների ներդրումը ժամանակակից ուսումնական գործընթացում։ Սակայն կան ու կլինեն խնդիրներ՝ տեխնոլոգիաների թանկությունը, համակարգիչների ձեռք բերումը, դրանց թարմացումն ու ժամանակից պահանջներին հարմարեցումը, համակարգիչների և ցանցերի սպասարկումը, ծրագրերի ձեռք բերումը, ինտերնետը։ Առայժմ չկա ուսումնադաստիարակչական գործընթաց ՏՏ-ի սահուն նոր հոսքն ապահովող մեթոդաբանական համակարգ։ Բացի դրանից՝ անհրաժեշտ են բարձր որակավորում ունեցող դասախոսներ, նրանց անընդհատ վերապատրաստում և մասնագիտացում։ Իհարկե, ավելի հեշտ է խոսել հօգուտ ավելի էժան տեխնոլոգիաների, օրինակ՝ գրքերը, գրատախտակն ու կավիճը, ևսովորեցնել նույն կերպ, ինչպես և անցյալում։ Միանշանակ ինչ-որ կերպ, ինչ-որ բան կարելի է նման ձևով սովորեցնել, և նույնիսկ դաստիարակել։ Սակայն ինչի՞ և ի՞նչ տեմպերով կարող ենք հասնել նման դաստիարակության արդյունքում՝ այսօրվա ժամանակակից տեխնոլոգիական հասարակության մեջ։ Կրթության որակի բարձրացումը որոշվում է ուսուցման ակտիվ գործիքների կիրառմամբ։ Ակտիվ ուսուցումը ենթադրում է սովորողների ներգրավում ուսումնական գործընթաց։ Այդ դեպքում սովորողը պարտադիր պետք է ակտիվ գործի և այդ գործունեության ընթացքում բացահայտի, մշակի և կիրառի ստացված գիտելիքները։ Այդ պատճառով ուշադրության է արժանի ակտիվ ուսուցման ժամանակակից մեթոդի՝համակարգչային ուսուցողական խաղի (ՀՈՒԽ) կիրառման հնարավորության ուսումնասիրումը[1]։

1.2 Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանությունը եվ ուսուցման եղանակները

Մեթոդաբանությունը» եզրույթը հունական ծագում ունի, նշանակում է «ուսմունք մեթոդի մասին» կամ «մեթոդի տեսություն»: Ըմբռնվում է նեղ և լայն ինաստով: Մեթոդաբանությունը գիտություն է օբյեկտիվ իրականության ճանաչողության և վերափոխման ընդհանուր սկզբունքների, այդ գործընթացի իրականացման մեթոդների, ուղիների ու միջոցների մասին: Մանկավարժական մեթոդաբանության, նրա առարկայի խնդիրների էության և նշանակության սահմանման վերաբերյալ տարբեր տեսակետներ են արտահայտվում, այսպես՝ մեթոդաբանությունը լայն իմաստով մեկնաբանվում է որպես տեսական ու պրակտիկ գործնեության իրականացման սկզբունքների ու եղանակների համակարգ, ինչպես նաև որպես ուսմունք այդ համակարգի մասին:

Ուսուցման մեթոդները՝ փոխներգործուն գործընթաց են մանկավարժի և սաների միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Ուսուցանվող նյութի ընկալում (ուսուցողական ընկալում), կարճաժամկետ փոխազդեցություն դասավանդողի և աշակերտի միջև՝ ուղղված կոնկրետ գիտելիքի[1], հմտության և կարողության փոխանցմանն ու յուրացմանը:

Ավանդույթի համաձայն՝ մանկավարժության ուսուցման մեթոդները դասակարգվում են **3** խմբի՝

- բանավոր,
- տեսողական,
- ինդուկտիվ և դեդուկտիվ (ըստ ուսումնական նյութի ներկայացման և ընկալման տրամաբանության)

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն: Այս բաժանումները հետագա հստակեցման կարիք ունեն, քանի որ ուսուցման գործընթացը չի կարող լինել պասսիվ, ու նաև միշտ չէ, որ այն սովորողների համար իրենից հայտնագործություն է ներկայացնի:

Հարկ է նշել որ գոյություն ունի **ակտիվ** և **պասիվ** ուսուցման եղանակներ՝

1.Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը: Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: Օրինակ, կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ.

- Համախմբել ուսուցման ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները,
- Կատարելագործել արդեն ձեռք բերած մասնագիտական հմտությունները,

Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ դաստիարակը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ զա[Балаев А.А.:2006]:

Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքրիր նյութերի ցուցադրություններ: Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է: Մասնավորապես՝

ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է:

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ: Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում: Այսպիսով, երբեմն ԱՈՒՄ հասկացությունը ընդարձակում են՝ դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն: Կոնկրետացնելով, դրանք ամբողջական կրթական միջոցառման, կամ էլ առարկայական ցիկլի կազմակերպման ձևեր են, չնայած, իհարկե, այդ ուսուցման ձևերի սկզբունքները կարող են օգտագործվել դասի առանձին մասերը անցկացնելու համար:

Ակտիվ ուսուցման մեթոդներն են, որոնք նպաստում են սովորողների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում,
- Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավում,
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն,
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Սովորողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Սովորողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ակտիվ ուսուցումը դաստիարակի և սաների միջև փոխգործակցություն է, որտեղ դաստիարակը և սաները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի

ժամանակ դասի հիմնական գործող անձը դաստիարակն էր, ապա այստեղ դաստիարակ-սան փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ[Анцибор Тула:2002]:

Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով: Պասիվ ուսուցում կարելի է բնութագրել որպես սաներ, ովքեր մասնակցում են դասընթացի տարրերին, որոնք ներառում են բացառապես տեղեկատվության ընդունում: Օրինակներ դրանք ներառում են՝ ընթերցում, տեսանյութ դիտում, նկաարների ցուցադրություն: Պասիվ ուսուցում մեթոդ է որտեղ սովորողները ստանում են տեղեկատվություն մանկավարժից և պահեստավորում այն, և «որտեղ սովորողը սովորեցնողից հետադարձ կապ չի ստանում»: Մարդկանց մոտ 60 տոկոսը համրվում է պասիվ սովորողներ: Կարելի է նաև հարցնել՝ ո՞րն է ակտիվ ուսուցման օրինակը: Հարց է առաջանում նաև՝ ի՞նչ է ակտիվ և պասիվ ուսուցումը: Ակտիվ ուսուցում անմիջապես կիրառում է նոր ստացված տեղեկատվությունը, այսինքն՝ օգտագործելով այն, ինչ ինձ սովորեցնում են որպես ուսուցման մաս: Պասիվ ուսուցում այն է, երբ ես ստանում եմ միայն տեղեկատվությունը[1]:

Ստորև ձեզ ենք ներկայացնում ակտիվ ուսուցման միջոց: Ակտիվ ուսուցման ժամանակ՝ մանկավարժը «սովորում ենք մարմնի մասերը» թեմայի շուրջ:Նախօրոք դաստիարակը սաներին ցուցադրել է իր վրա մարմնի մասերը այնուհետև բաժանելով թերթիկները՝ սաներին հանձնարարել է նկարել այն մարմնի մասերը որոնք իրենք այդ պահին կհիշեն:Հարկ է նշել, որ պասիվ ուսուցման մեջ ամենակարևոր և բաղկացուցիչ մասը համարվում է ուշադրության կենտրոնացումը:

2 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ)՝ ՍԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, և ավելի լավ արդյունքներ ուսումնական գործընթացում: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սաների մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Իրականում, նախ և առաջ պետք է հասկանալ ի՞նչ է նշանակում «ծնողի համագործակցություն»: «Ծնողի համագործակցություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն սաների հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ ուսումնական հաստատությունում: Այն միավորում է ծնողի և մանկավարժներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի առաջադիմության բարելավմանը: «Ծնողի համագործակցություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, սաների ուսման գործընթացում և այլևայլ միջոցառումներին: Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այս փաստաթղթում «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար: Ուսումնական գործընթացում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում[2]:

Դաստիարակի և սաների ծնողների միջև փոխգործակցության կազմակերպումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության ամենադժվար ոլորտներից է: Ծնողների և մանկավարժների փոխազդեցությունը գալիս է տարբեր արժեքային համակարգերից: Եթե ուսուցիչների/դաստիարակների համար կարևոր է, թե ինչպես է կազմակերպվում խմբի գործունեությունը (ռեժիմ, ծրագրի իրականացումն ապահովում), ապա ծնողների համար կարևոր է, թե ինչպես է իրենց երեխան «տեղավորվում» ռեժիմին և ծրագրի իրականացմանը:

Ընտանեկան կրթության առաջնահերթության ճանաչումը պահանջում է բոլորովին այլ հարաբերություններ ընտանիքի և նախադպրոցական հաստատության միջև: Այս հարաբերությունների նորույթը որոշվում է «համագործակցություն» և «փոխազդեցություն» հասկացություններով:

Համագործակցությունը «հասակակիցների հետ հաղորդակցություն» է, որտեղ ոչ ոք առանձնավցնելու, վերահսկելու, գնահատելու արտոնություն չունի:

Փոխազդեցությունը համատեղ գործունեության կազմակերպման միջոց է, որն իրականացվում է սոցիալական ընկալման (ընկալման) հիման վրա և հաղորդակցության միջոցով: Ո՞րն է ժամանակակից ծնողի դիմանկարը եկեք հասկանանք միասին՝ ժամանակակից ծնողը ո՛չ լավն է, ո՛չ վատը, նա պարզապես հարմար է իր ժամանակին: Նա երբեմն վախենում է վատ, ոչ կոմպետենտ մանկավարժ լինելուց կամ կարծես փորձում է ընդգծել իր անտարբերությունը սոցիալական շրջանակների և դաստիարակության պահանջների նկատմամբ: Շատ ծնողներ այսօր զբաղված են ընտանիքի նյութական բարեկեցության ապահովմամբ, շատ քիչ ժամանակ է մնացել երեխաների հետ շփվելու համար:

Մյուս կողմից, կարելի է նշել, որ ժամանակակից ծնողները կրթված են, լայնորեն հասանելի են գիտահանրամատչելի տեղեկատվությանը մանկավարժության և հոգեբանության ոլորտում: Սակայն ընդհանուր կուլտուրայի բարձր մակարդակը, էրուդիցիան և ծնողների տեղեկացվածությունը նրանց մանկավարժական մշակույթի բավարար մակարդակի երաշխիք չեն: Այստեղ առաջանում է հակասություն ծնողներին հասանելի տեղեկատվության քանակի և այն արդյունավետ օգտագործելու անբավարար ունակության միջև սեփական երեխաներին դաստիարակելու պրակտիկայում: Ծնողները դժվարություններ են ունենում երեխաներին դաստիարակելու, լավագույն կրթական մեթոդներն ու

տեխնիկան ընտրելու, համացանցից քաղված տեղեկատվությունը և հանրաճանաչ գրական տեղեկատվությունն ուղղակիորեն գործնականում կիրառելու հարցում: Նախադպրոցական հաստատությունների գործունեության ժամանակակից պայմանները առաջ են բերում ընտանիքի հետ փոխգործակցությունը առաջատար տեղերից մեկում: Փորձագետների կարծիքով՝ մանկավարժների և ծնողների միջև հաղորդակցությունը պետք է հիմնված լինի բացության, փոխըմբռնման և վստահության սկզբունքների վրա: Ծնողները նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնական այցելուներն են, հետևաբար նրանց հետ դաստիարակների փոխգործակցությունը պարզապես անհնար է առանց ընտանիքի շահերն ու կարիքները հաշվի առնելու: Այս պատճառով է, որ այսօր շատ նախադպրոցական հաստատություններ առաջնորդվում են աշխատանքի այնպիսի ձևերի և մեթոդների որոնմամբ, որոնք թույլ են տալիս հաշվի առնել ծնողների իրական կարիքները և նպաստել ակտիվ ծնողական դիրքի ձևավորմանը: Ծնողների հետ աշխատանքի ոչ ավանդական ձևերը, այսինքն. ոչ ստանդարտ, հատուկ, օրիգինալ, տարբերվում է ընդհանուր ընդունվածից:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների և աշակերտների ընտանիքների փոխգործակցությունը ոչ ավանդական ձևերի միջոցով նախապայման է.

- ծնողների ուշադրությունը գրավել նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և վերապատրաստման խնդրի վրա՝ երեխայի լիարժեք և ժամանակին զարգացման նպատակով.
- ծնողների նպատակային կրթությունը՝ նրանց ֆունկցիոնալ գրագիտությունը և ուսումնական հաստատության մանկավարժների հետ լիարժեք համագործակցության կարողությունը բարձրացնելու համար.
- ընտանիքի դաստիարակչական դերում ակտիվ դիրքի ձևավորում

Դաստիարակների և սաների ընտանիքների միջև համգործակցության գործընթացի կազմակերպում՝

Դաստիարակի և ծնողի արդյունավետ փոխգործակցության հիմնական ասպեկտը, ըստ հեղինակների, հիմնված է վստահության, երկխոսության, գործընկերության սկզբունքների վրա: .

1. Վստահության հոգեբանություն՝ ծնողները պետք է վստահ լինեն, որ լավ վերաբերմունք ունեն իրենց երեխայի նկատմամբ: Մանկավարժներն իրենց հերթին չպետք է շտապեն գնահատել իրենց զարգացումը:
2. Մանկավարժը պետք է ցույց տա ծնողների հետ շփվելու կոնկրետ, դրական ուղիներ:
3. Տեղեկատվությունը պետք է դինամիկ լինի՝ առնվազն շաբաթը մեկ անգամ անհրաժեշտ է թարմացնել ծնողների համար նախատեսված կրպակի նյութը (հսկիչ աղյուսակը՝ հավելվածում):
4. Ծնողները պետք է հնարավորություն ունենան իրենց համար հարմար ժամանակ գալ խումբ, ներկա գտնվել խմբասենյակում, ռեժիմի պահերին, պարապել «Բաց օրերին», ուսուցչի խնդրանքով կամ ծնողների խնդրանքով:
5. Դաստիարակների և ծնողների միջև փոխգործակցության գիծն անփոփոխ չի մնում՝ Ծնողները և ուսուցիչները պետք է կարողանան միմյանց արտահայտել իրենց տեսակետը դաստիարակության որոշակի խնդիրների վերաբերյալ (հանդիպումներ-բանավեճեր, անհատական շփում, հետաքրքրություն ներկայացնող հանդիպումներ «Ծնողների ակումբում»):
6. Տարբերակված մոտեցում՝ նմանատիպ ծնողավարման խնդիրներ ունեցող ծնողների փոքր խմբի հետ շփվելը (օրինակ՝ մանկական համառություն, ամաչկոտություն, տրամադրության խանգարում, անհանգիստ քուն)

Դաստիարակի և սաների ընտանիքների միջև համագործակության ձևերը, մեթոդները և միջոցները՝

Աշխատանքի ամենաարդյունավետ և հետաքրքիր ձևերը, ինչպես նշում են իրենք՝ ծնողներն են.

- խմբային հանդիպումներ բանավեճերի, թոք-շոուների ձևով, խաղային պահերի ընդգրկմամբ, մասնագետների հրավերով,
- «Ծնողների ակումբ», վարպետության դասեր ծնողների համար
- «Բաց դռների օրեր»,
- աշակերտների ընտանիքների հետ փոխգործակցության զանգվածային ձևերի անցկացում (արձակուրդներ, մրցույթներ, թատերական օրեր, էքսկուրսիաներ և այլն);
- նախագծային գործունեության կազմակերպում ուսուցիչ - երեխաներ - ծնողներ

- տեսողական մանկավարժական քարոզչության ձևավորում, թերթ ծնողների համար

Ծնողների հանդիպումը ցանկացած ուսումնական հաստատությունում ծնողների հետ մեր օրերում փոխարինվել է ոչ ավանդական տարբերակներով՝

Հանդիպումներ՝ որպես համագործակցության ձև, ծնողներին հնարավորություն է տալիս ավելին իմանալ նախադպրոցական ուսումնական հաստատությունում ուսումնական աշխատանքի բովանդակության մասին, իսկ ուսուցիչները կսովորեն մեր երեխաների ընտանիքներում դաստիարակության առանձնահատկությունները: Ծնողների ներգրավվածությունը մանկապարտեզային կյանքում ստեղծում է մի իրավիճակ, երբ հայրերն ու մայրերը մտածում են դաստիարակության խնդիրների մասին, հաճույք են ստանում երեխայի հետ խաղեր խաղալուց և ընդհանուր թիմային հաղթանակից: Այս ամենը համախմբում է ընտանիքը, բարձրացնում նրա մանկավարժական մշակույթը և գիտակցությունը այն մասին, որ սիրելի երկկողմանի: Ծնողների ժողովը դաստիարակների և ծնողների միջև հաղորդակցության արդյունավետ ձև է: Հենց հանդիպումների ժամանակ դաստիարակը հնարավորություն ունի կազմակերպված կերպով ծանոթացնել ծնողներին մանկապարտեզում և ընտանիքում նախադպրոցական տարիքի երեխաներին դաստիարակելու առաջադրանքներին, բովանդակությանը, մեթոդներին:

Կարծում ենք, որ կարևոր է ծնողների համար հանդիպումներ, խորհրդակցություններ կազմակերպել, որպեսզի դրանք ձևական չլինեն, բայց հնարավորության դեպքում ծնողներին ներգրավեն խնդիրների լուծմանը, զարգացնեն արդյունավետ համագործակցության ոգին, քանի որ. ժամանակակից ծնողները չեն ցանկանում լսել ուսուցիչների երկար ու դիդակտիկ դասախոսությունները: Մենք մշակել ենք քայլեր կամ մեթոդներ, որպեսզի մանկավարժները աշխատեն ծնողների հետ՝ խրախուսելու ծնողներին ներկա գտնվել հանդիպմանը՝

1. Դիտարկենք միջոցառման օրիգինալ ոչ ստանդարտ անվանում:
2. Անձամբ հրավիրեք՝ հետաքրքրվելով այցելելու հարմար ժամանակի մասին, ընտրություն տալով հանդիպումից ոչ ուշ, քան մեկ-երկու շաբաթ առաջ:
3. Հետաքրքրվեք հանդիպման գովազդով գովազդային ձևով (կազմակերպեք գովազդային գրքույկ)՝ թողնելով ակնարկ, ինտրիգ:

4. Հանդիպմանը ներառեք երեխաների ելույթը հանդիպման թեմայով, տեսանկարահանում և այլ անակնկալ պահեր՝ ծնողներին տեղեկացնելով այս մասին։

Աշխատանքի ամենաարդյունավետ և հետաքրքիր ձևերը, ինչպես նշում են իրենք՝ ծնողներն են՝

- խմբային հանդիպումներ բանավեճերի, թոք-շոուների ձևով, խաղային պահերի ընդգրկմամբ, մասնագետների հրավերով,
- «Ծնողների ակումբ», վարպետության դասեր ծնողների համար
- «Բաց դռների օրեր»,
- աշակերտների ընտանիքների հետ փոխգործակցության զանգվածային ձևերի անցկացում (արձակուրդներ, մրցույթներ, թատերական օրեր, էքսկուրսիաներ և այլն);
- նախագծային գործունեության կազմակերպում դաստիարակ-երեխաներ-ծնողներ [3]:

Եզրակացություն

Աշխատանքի առջև սահմանված էին հետևյալ խնդիրները՝

- Ներկայացնել՝ մանկավարժության պատմական զարգացումը և ժամանակակից մանկավարժության մեջ կիրառվող մեթոդները:
- Բնութագրել՝ ուսուցման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդների առավելությունները ուսումնական գործընթացում
- Վեր հանել՝ մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության կարևորությունը կրթական գործընթացում և դաստիարակության հարցում:

Մանկավարժությունը գիտություն է և արվեստի, գիտելիքի, վարպետության, մարդկանց ճանաչելու ձգտման և կարողության սինթեզ: Կարելի է սահմանել նաև այսպես. մանկավարժությունը գիտություն է, որը հետազոտում է կրթության, դաստիարակության և զարգացման օրինաչափությունները: Սույն աշխատանքից պարզ դարձավ՝ որ մանկավարժությունը որպես գիտություն անցել է պատմական զարգացում՝ օր օրի ավելի կատարելագործվելով և երբեք չի կորցրել իր կարևորության գաղափարը:Եվ իզուր չէ ասված, որ մանկավարժությունը գիտություն է՝ արվեստի, գիտելիքի, վարպետության, մարդկանց ճանաչելու ձգտման և կարողության սինթեզ: Կարելի է սահմանել նաև այսպես. մանկավարժությունը գիտություն է, որը հետազոտում է կրթության, դաստիարակության և զարգացման օրինաչափությունները: Աշխատանքից նաև պարզ դարձավ, որ ակտիվ, պասիվ և ինտերակտիվ ուսուցման մեթոդների ուսումնասիրումը կարող է մեզ բերել միայն ճիշտ կողմնորշման՝ ուսումնական գործընթացը վարել էլ ավելի ճիշտ ընտրված մեթոդով և քայլել ժամանակին համահունչ՝ ինչն էլ մեզ բերեց այն եզրահանգմանը, որ մեթոդը նաև միջոց է հասկանալու և պատկերացում կազմելու մեր հետագա աշխատանքի մասին: Իսկ այն խնդրին թե ինչպե՞ս կազմակերպել և իրագործել մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցությունը կրթական գործընթացում և ընտանեկան դաստիարակության հարցում , մենք եկանք այն եզրահանգմանը, որ երբ կա երեխա այստեղ գլխավոր տեղում է՝երեխան(իր ստացած գիտելիքներով) ինչի արդյունավետ գրավականը՝ ծնող-դաստիարակ համատեղ և ճիշտ կողմնորոշված աշխատանքն է:

Այս եզրույթը նույնպես հաստատեց, որ երեխան նաև սովորում է, որ ինքը շրջապատված է իրեն սիրող մարդկանցով, որոնց գլխավոր նպատակն է նրան դարձնել պիտանի մարդ հասարկության և երկրի համար:

Գրականության ցանկ

1. Գ.Ե.Ղույումչյան, «Մանկավարժություն», գիրք 1-ին, Երևան, 2005 թ, էջ 14
2. Գ.Ե.Ղույումչյան, «Մանկավարժություն», գիրք 1-ին, Երևան, 2005 թ, էջ 16
3. Յու.Ա. Ամիրջանյան, «Մանկավարժություն», Երևան, 2005 թ, էջ 18
4. Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула 2002
5. Подласый И.П., “Педагогика”, кн. 1, М., “ВЛАДОС”, 2002, с.9
6. Сластенин В.А., “Общая педагогика”, ч. 2, “ВЛАДОС”, М., 2002, с. 11
7. Смирнов В.И., “Общая педагогика в тезисах, дефинициях, иллюстрациях”, Педагогическое общество России, М., 1999, с. 21

1. https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%AA%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6#cite_note-ReferenceA-5
2. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf?fbclid=IwAR0K2zxKloxJI9fV6dNyikdkPFVD_2gU-PobY-UW0bs-3aXtb451tgn9vrE
3. https://travelerscoffee.ru/hy/eggplant/netradicionnye-formy-raboty-s-roditelyami-v-detskom-konsultaciya-dlya/